

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՏԴ 340:06  
ԳՄԴ 67  
Ե 540

**ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ  
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**ՆՎԻՐՎՈՒՄ Է Ա. ԵՍԱՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ  
100-ԱՄՅԱԿԻՆ**

**Հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհուրդը  
Գլխավոր խմբագիր՝  
իրավ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյան**

**Խմբագրակազմ՝  
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. Գաբուզյան  
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա. Դիլբանդյան  
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ. Վաղարշյան  
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Բ. Դանիելյան  
իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Վ.Դ. Ավետիսյան  
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Գ. Մեղրյան  
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Վ. Զոչարյան**

**Ե 540 ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսա-  
կան կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; Գլխ. խմբ.՝  
Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2015.–208 էջ:**

Ժողովածուն ամփոփում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում 2014թ. դեկտեմբերի 11-ին տեղի ունեցած գիտաժողովի նյութերը՝ նվիրված ականավոր իրավաբան Աղասի Եսայանի ծննդյան 100-ամյակին:

Այն ընդգրկում է իրավունքի գրեթե բոլոր ճյուղերի վերաբերյալ գիտական աշխատանքներ, որոնք աչքի են ընկնում բարձրացված հարցերի արդիանա-կությանը, տեսական խորը վերլուծություններով և գործնական նշանակու-թյամբ: Ժողովածուի մեջ տեղ են գտել ինչպես ճանաչված գիտնականների, այն-պես էլ երիտասարդ դասախոսների ու ասպիրանտների աշխատանքները: Կա-րող է օգտակար լինել իրավաբան տեսաբանների, իրավաստեղծ և իրավակի-րառ մարմինների ներկայացուցիչներին, իրավունքի տարբեր հարցերով հե-տաքրքրվողներին:

ՀՏԴ 340:06  
ԳՄԴ 67

ISBN 978-5-8084-1933-9

© ԵՊՀ հրատ., 2015  
© Հեղ. խումբ, 2015

Երևան  
ԵՊՀ հրատարակչություն  
2015

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Վիզեն Քոչարյան**

“PERINCEK V. SWITZERLAND” գործով ՄԱԲԴՈՒԻ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17 ՎՃՈՒԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԿՈՂՄԵՐԸ .....5

**Լևոն Գևորգյան**

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆՆԵՐԻ ԶԱՐԱՇԱՀՈՒՄԸ ԵՎ ԶԻՐԱԳՈՎՆ  
ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԸ .....18

**Անի Միմոնյան**

ԶԱՐԳԱՅՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ .....25

**Արթուր Վաղարշյան**

*ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ*  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ .....35

**Տարոն Միմոնյան**

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԱՆԿԱՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐՈՇԱԿԻԱՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԴՐԱՆՈՒՄ ՆԿԱՏԵԼԻ ՈՐՈՇ ՕՐԻՆԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....56

**Ալվարո Ալեքսանյան**

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ  
ՀԱՅԱՑՔՆԵՐԸ .....68

**Նարինե Դավթյան**

*ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ*  
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ԿԱՌՈՒՅԱԿԱՐԳԻ ՓՈԻԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԶԵՎԵՐԻ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ .....87

**Գևորգ Դանիելյան**

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ .....98

**Վարդան Այվազյան**

ԿՈՆՍՏԻՏՈՒՅԻՈՆԱԼԻԶՄԻ (ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ)  
ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ..... 124

**Անահիտ Մանասյան**

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ  
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ  
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԻ ԻՐԱՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ ..... 140

**Արա Գաբուզյան**

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ԱՂԲՅՈՒՐ ..... 149

**Սամվել Դիլբանյան**

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԼՍՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ..... 160

**Аида Искоян**

ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ ЭКОЛОГИЧЕСКОГО ПРАВА:  
МЕЖДУНАРОДНЫЕ И НАЦИОНАЛЬНЫЕ ПРЕДПОСЫЛКИ ..... 174

**Գրիգոր Բեքմեզյան**

ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ  
ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՅՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ ..... 190

ПРОБЛЕМНЫЕ АСПЕКТЫ РЕШЕНИЯ ЕВРОПЕЙСКОГО  
СУДА ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА ПО ДЕЛУ  
“PERINCEK V. SWITZERLAND” ОТ 17 ДЕКАБРЯ 2013 ГОДА

Виген Кочарян  
*Заведующий кафедрой европейского и международного права ЕГУ,  
канд. юрид. наук, доцент*

В статье предпринята попытка критического анализа решения Европейского суда по правам человека по делу “Perincek v. Switzerland”. Отмечается неоднозначность и сомнительность аргументации суда и применение “двойных стандартов”, что привело к принятию ошибочного решения.

PROBLEMATIC ASPECTS OF THE JUDGMENT  
(DECEMBER 17, 2013) OF THE ECHR ON “PERINCEK V.  
SWITZERLAND” CASE

Vigen Kocharyan  
*Head of the YSU Chair of European and International Law,  
Candidate of Legal Sciences, Docent*

The ECHR judgment on “Perincek v. Switzerland” case is discussed in the article. The critical analysis of Court’s argumentation shows ill-founded conclusions and use of “double standards” which led to the adoption of erroneous judgment.

**Բանալի բառեր՝** Հայոց ցեղասպանություն, Թուրքիա, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Պերինչեկ, խտրականություն, հայատյացություն, Հոլոքոստ:

**Ключевые слова:** Геноцид армян, Турция, Европейский суд по правам человека, Перинчек, дискриминация, арменофобия, Холокост.

**Keywords:** Armenian Genocide, Turkey, European Court of Human Rights, Perincek, Discrimination, Armenophobia, Holocaust.

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆՆԵՐԻ ԶԱՐԱՇԱՀՈՒՄԸ ԵՎ  
ԶԻՐԱԳՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԸ

Լևոն Գևորգյան  
*ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ,  
իրավ. գիտ. թեկնածու*

Միջազգային իրավունքում հարկադրման ուղղահայաց մեխանիզմների բացակայությունը և միջազգային իրավունքի հորիզոնական բնույթը բազմիցս առիթ են հանդիսացել վերջինիս ոչ արդյունավետության քննադատման համար: Այս ելակետային խնդիրը 20-րդ դարի վերջից և 21-րդ դարում պատճառ է դառնում մի նոր երևույթի, ինչպիսին է տարբեր միջազգային դատական ատյանների օգտագործումը անուղակիորեն վերջիններիս իրավագործության մեջ չմտնող հիմնահարցերի քննարկման և այդ հարցերին գնահատական տալու համար:

Նման շահարկման թերևս առաջին օրինակներից մեկը նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի (ատյան, որը ստեղծվել է ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվության համար) օգտագործումն էր միջազգային իրադարձությունների պետությունների ունեցած դերակատարությանը գնահատական տալու նպատակով: Վերջինիս առաջին իսկ գործի շրջանակներում՝ *Մեղադրողն ընդդեմ Դուսկո Տադիչի*<sup>1</sup>, քննարկվեց Բոսնիա-Հերցեգովինայի տարածքում ստեղծված և գործող սերբական զինված ուժերի կապը Սերբիայի պետության հետ: Թեև դա իրականացվեց մարդասիրական իրավունքի կիրառելի նորմերի հստակեցման նպատակով՝ զինված ընդհարման բնույթի գնահատման և ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվության համատեքստում, այնուամենայնիվ՝ նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի գնահատականն ուներ նաև իր հետևանքներ:

<sup>1</sup> *Prosecutor v. Dusko Tadić*, Case no. IT-94-1-T (7 May 1997).

ընդհանուր արժեքները հարաբերությունների հարթությունում: Ինչպես տարիներ անց նշեց հենց այդ պահին տրիբունալի նախագահը՝ միջազգային իրավունքի հանրահայտ մասնագետ Անտոնիո Կասսեզեն, զինված ընդհարման միջազգային բնույթի որակում տրիբունալի կողմից փաստացի նշանակում էր, որ տեղական սերբական զինված ուժերը (այսպես կոչված՝ Ռեսպուբլիկա Սրպսկայի զինված ուժերը) վերահսկվում էին Սերբիայի պետության կողմից, այն է՝ այդ զինված ուժերի գործողությունները պետք է վերագրվելի համարվեին Սերբիային<sup>1</sup>: Եվ թեև ՄԱԿ-ի Միջազգային դատարանը *Բոսնիա-Հերցեգովինան ընդդեմ Սերբիայի*<sup>2</sup> դատական գործի շրջանակներում որոշեց, որ նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի գնահատականները կիրառելի են միայն ֆիզիկական անձանց պատասխանատվության հարցեր քննարկելիս, այնուամենայնիվ *Մեղադրողն ընդդեմ Դուսկո Տադիչի* գործը նախանշեց միջազգային իրավունքում նոր բացասական երևույթի առաջին ուրվագծերը. միջազգային ատյանները կարող են օգտագործվել իրենց իրավասությունից դուրս երևույթների վերաբերյալ գնահատականներ տալու նպատակով:

Այսօր արդեն նման նպատակներով է օգտագործվում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Արդե՞ջանի քաղաքացիներ Էլիսան և Ադիշիրին Չիրագովների, Ռամիզ Գեբրաիլովի, Աքիֆ Հասանովի և Ֆեխրեդդին Փաշանի կողմից հարուցված *Չիրագովը և այլք ընդդեմ Հայաստանի Հանրապետության* գործը, որի վերջնական քննությունը տեղի ունեցավ 2014թ. հունվարի 22-ին<sup>3</sup>, առերևույթ Լաչինի տարածքում նախկինում բնակված անձանց սեփականության իրավունքի ռոնահարման մասին է: Սակայն գործն

<sup>1</sup> A. Cassese, “The Nicaragua and Tadić Test Revisited in Light of the ICJ Judgment on Genocide in Bosnia”, 18 European Journal of International Law (2007).

<sup>2</sup> *Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia Herzegovina v. Serbia and Montenegro)*, 2007 ICJ Reports 43, p. 208, para. 401.

<sup>3</sup> *Chirgaov and Others v. Armenia*, ECHR Application no. 13216/05.

իրականում ոչ այնքան անհատների սեփականության իրավունքի, որքան Լեոնային Ղարաբաղի Հանրապետության նկատմամբ Հայաստանի Հանրապետության վերահսկողության մասին է, և փաստացի նպատակ է հետապնդում հասնել նրան, որ ԼՂՀ-ն որակվի որպես, այսպես կոչված, «խամաճիկ պետություն», ՀՀ-ն դե ֆակտո մարմին, քանի որ նման գնահատականներն էական կասկածի տակ կդնեն ինքնորոշման իրավունքի վերաբերյալ ԼՂՀ-ի հավակնությունները:

Տվյալ գործի երկու լսումների<sup>1</sup> ընթացքում ՀՀ-ի կողմից Լաչինի տարածքում արտատարածքային իրավագործության իրականացումը հիմնավորելու նպատակով հայցվորների և երրորդ կողմ հանդիսացող Ադրբեջանի ներկայացուցիչների կողմից վկայակոչվեց երկու փաստարկ՝ առաջին՝ այսպես կոչված «գործակալության բացառությունը» (երբ արտատարածքային իրավագործությունը իրադարձությունների և անհատների նկատմամբ հաստատվում է պետության գործակալների անմիջական մասնակցության շնորհիվ) և երկրորդ՝ տարածքի նկատմամբ «արդյունավետ ընդհանուր վերահսկողության բացառությունը»: Երկրորդ դեպքը վերաբերում է այնպիսի իրավիճակներին, երբ պետություններն իրականացնում են վերահսկողություն իրենց տարածքից դուրս տարածքների նկատմամբ՝ հանգեցնելով այդ տարածքում տեղի ունեցող իրադարձությունների համար պետության պատասխանատվությանը:

«Ընդհանուր արդյունավետ վերահսկողության» հասկացությունը չի կարելի շփոթել այսպես կոչված «արդյունավետ վերահսկողության» կամ «ընդհանուր վերահսկողության» հասկացությունների հետ, որոնք համապատասխանաբար ՄԱԿ-ի Միջազգային դատարանի և նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի կողմից օգտագործվող վերագրելիության կանոններ են, այլ

<sup>1</sup> Լսումները հասանելի են <http://www.echr.coe.int> կայքում:

ոչ թե արտատարածքային իրավագործության հաստատման չափանիշ:

Սակայն առավել քան ակնհայտ է, որ բոլոր այն դեպքերում, երբ վերահսկողությունն այլ տարածքների նկատմամբ իրականացվում է անհատների կամ միավորների միջոցով, որոնք չեն հանդիսանում պետության դե յուրե մարմին («սուբորդինացված տեղական վարչակարգ»), այդ անհատների կամ միավորների գործողությունների վերագրելիությունը պետության անխուսափելիորեն ենթադրվում է, և, հետևաբար, Լաչինի տարածքի նկատմամբ ՀՀ իրավագործության հաստատումն անհնար է առանց ԼՂՀ զինված ուժերի գործողությունները ՀՀ-ին վերագրելու, և, ընդհակառակը Լաչինի տարածքի նկատմամբ ՀՀ իրավագործության ճանաչումը ենթադրում է ԼՂՀ զինված ուժերի գործողությունների վերագրելիությունը ՀՀ-ին:

Հենց այս հանգամանքը չարաշահելու փորձ իրականացվեց Ադրբեջանի ներկայացուցիչների կողմից, որոնք փորձում են օգտագործել մարդու իրավունքների պաշտպանության համար ստեղծված ատյանը և մարդու իրավունքների պաշտպանության չափանիշները, որպեսզի, վերջին հաշվով, հասնեն ԼՂՀ գործողությունների վերաբերելիությանը Հայաստանի Հանրապետությանը:

Սակայն պետությունների պատասխանատվության հիմնահարցը պետք է որոշվի ընդհանուր միջազգային իրավունքի գերակա կանոնների հիման վրա, որոնք ենթակա չեն փոփոխման կամ ձևափոխման մեկ միջազգային ատյանից մյուսը անցում կատարելիս: Ինչպես նշել է ՄԱԿ-ի Միջազգային դատարանը. «Բացահայտորեն սահմանված *lex specialis*-ի բացակայության պայմաններում, ենթադրյալ անիրավաչափ գործողությունները պետություններին վերագրելու կանոններ չեն ձևափոխվում կախված պետության անիրավաչափ վարքագծի տեսակից»<sup>1</sup>:

<sup>1</sup> *Bosnia Herzegovina v. Serbia and Montenegro*, op. cit.:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ միջազգային իրավունքում առկա է ամուր կանխավարկած նորմատիվ կոլիզիաների դեմ: Ինչպես նշել է Միջազգային իրավունքի հանձնաժողովը միջազգային իրավունքի ֆրագմենտացիայի վերաբերյալ իր հաշվետվությունում. «Ընդհանուր իրավունքի վերաբերյալ իրարամերժ տեսություններն առաջ են բերում երկու տեսակ խնդիր: Առաջին՝ դրանք նվազեցնում են իրավական անվտանգությունը: Իրավունքի սուբյեկտներն այլևս ունակ չեն լինում կանխատեսել պաշտոնական մարմինների արձագանքը և համապատասխանաբար պլանավորել իրենց գործողությունները: Երկրորդ՝ իրավունքի սուբյեկտները հայտնվում են անհավասարաչափ պայմաններում: Իրենց իրավունքների բովանդակությունը կախվածության մեջ է հայտնվում պատասխանատու ատյանից»<sup>1</sup>:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պարտականությունն է *Չիրագովը և այլք ընդդեմ Հայաստանի Հանրապետության* գործի շրջանակներում հետամուտ լինել ՄԱԿ-ի Միջազգային դատարանի կողմից օգտագործվող «արդյունավետ վերահսկողության» վերագրելիության կանոնին և դրանով իսկ չնպաստել միջազգային իրավունքի ֆրագմենտացիային: Արդյունավետ վերահսկողության կանոնը բազմիցս վերահաստատվել է Միջազգային դատարանի կողմից և հանդիսանում է պետությունների պատասխանատվության ոլորտում կիրառվող վերագրելիության ունիվերսալ կանոն, որի համաձայն՝ գուտ ֆինանսավորումը և օժանդակության տրամադրումը բավարար չեն ոչ պետական կազմավորումների (այդ թվում նաև՝ չճանաչված պետություններ) գործողությունները պետություններին վերագրելու համար. վերագրելիության համար անհրաժեշտ է անմիջական հանձնարարականների առկայությունը:

<sup>1</sup> Fragmentation of International Law: Difficulties Arising from the Diversification and Expansion of International Law, UN Doc. A/CN.4/L.682, para. 52:

Դրա հետ մեկտեղ, սակայն, անհրաժեշտ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետությունը տվյալ գործում ներկայացնող ավստրալական ծագումով բրիտանացի իրավաբան Ջոֆրի Ռոբերթսոնը նախընտրեց կառուցել պաշտպանությունը ոչ թե վերագրելիության բացակայության, այլ ներպետական միջոցները սպառված չլինելու փաստարկի հիման վրա՝ նշելով, որ դիմումատուների համար դատական պաշտպանության միջոցները հասանելի էին թե՛ ԼՂՀ-ում, թե՛ ՀՀ-ում: Նման փաստարկները, որոնք կառուցված են ԼՂՀ-ի և ՀՀ-ի միասնական իրավասուբյեկտության կամ փոխկապվածության կանխավարկածի վրա, կասկածի տակ կարող են դնել ԼՂՀ-ի գործողությունները ՀՀ-ին վերագրելի չլինելու վերաբերյալ բոլոր փաստարկները: Եվրոպական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար նպաստավոր վճիռ ընդունելու հեռանկարները նման պայմաններում խիստ սահմանափակ են թվում:

## ABUSE OF INTERNATIONAL FORA AND THE CHIRAGOV V. ARMENIA CASE

Levon Gevorgyan

*Assisting Professor at the YSU Chair of European and International Law,  
Candidate of Legal Sciences*

Due to the absence of vertical enforcement mechanisms under international law, states have started to use different international courts and tribunals in order to indirectly touch upon issues that are outside of the jurisdiction of those institutions. One of the early examples is the Tadic case of the ICTY, a body authorized to administer justice in international criminal law, which however touched upon issues of attribution of acts of non-state-actors to states. Another such attempt is made by Azerbaijan in Chiragov v. Armenia case before the ECHR. The author evaluates the applicable law and claims that in this case the ECHR must adhere to the standards of attribution used by the ICJ and not to contribute to the fragmentation of international law.

## ЗЛОУПОТРЕБЛЕНИЕ МЕЖДУНАРОДНЫХ ИНСТАНЦИЙ И ДЕЛО ЧИРАГОВА ПРОТИВ АРМЕНИИ

Левон Геворгян

*Ассистент кафедры европейского и международного права ЕГУ, канд. юрид. наук*

Из-за отсутствия вертикальных механизмов принуждения в международном праве, государства прибегают к использованию разных международных судов и трибуналов, с целью опосредованного обсуждения вопросов, находящихся вне юрисдикции этих институтов. Одним из ранних примеров такого злоупотребления является дело Тадича Международного уголовного трибунала по бывшей Югославии, органа уполномоченного осуществлять правосудие в международном уголовном праве, который, однако, затронул вопросы атрибуции действий негосударственных акторов государствам. Другая аналогичная попытка осуществляется сегодня Азербайджаном в рамках дела Чирагов против Армении ЕСПЧ. Автор обсуждает действующее международное право и утверждает, что ЕСПЧ должен придерживаться стандартов атрибуции, используемых Международным судом ООН и не способствовать фрагментации международного права.

**Բանալի բառեր՝** միջազգային իրավունք, վերագրելիություն, պատասխանատվություն, Չիրագով, միջազգային ատյան, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, ՄԱԿ-ի Միջազգային դատարան:

**Ключевые слова:** международное право, атрибуция, ответственность, Чирагов, международные суды, Европейский суд по правам человека, Международный суд ООН.

**Keywords:** International law, Attribution, Responsibility, Chiragov, International Courts, European Court of Human Rights, International Court of Justice.